

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ  
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման խելացի լուծումների ապահովումը և կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացումը՝ լաբորատոր փորձասարքերի համալրմամբ» /ՍՄԱՐԹԼԱԲ/ դրամաշնորհային ծրագրի

Դրամաշնորհային պայմանագիր՝ № 3/23-CIF առ «14» հունիսի 2023թ.

Առաջադրանքի անվանումը: **«Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկ»-ի մշակման խորհրդատվական ծառայություն** իրականացնելու համար

Հրավեր No. **ՃՇՀԱՀ-ԱԽԸ-2025/1**

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը «Ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման խելացի լուծումների ապահովումը և կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացումը՝ լաբորատոր փորձասարքերի համալրմամբ» /ՍՄԱՐԹԼԱԲ/ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսում է դրամաշնորհային ծրագրի ֆինանսական միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Խորհրդատվական ծառայությունները («Ծառայություններ») ներառում են՝ «Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկ»-ի մշակման խորհրդատվական ծառայության իրականացում:

Սույն առաջադրանքի մանրամասն տեխնիկական բնութագիրը կցված է հետաքրքրության հայտերի ներկայացման սույն հրավերին (Հավելված 1):

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը հրավիրում է բոլոր իրավասու անհատ խորհրդատուներին («խորհրդատուներ») ներկայացնելու իրենց հետաքրքրվածությունը վերոնշյալ խորհրդատվական ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկատվություն այն մասին, որ իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձառություն ծառայությունները մատուցելու համար: Կարճ ցուցակի չափանիշներն են.

**1. Խորհրդատուի ընդհանուր որակավորումը (30 միավոր)**

- Բարձրագույն կրթություն ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում: Գիտական աստիճանի առկայությունը կդիտվի իբրև առավելություն:
- Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը շինարարության մեջ նեղ մասնագիտացումը կդիտվի իբրև առավելություն:
- Հայերենի՝ գերազանց, ռուսերենի և անգլերենի լավ իմացություն:
- Համակարգչային՝ Microsoft Word, Excel, Internet ծրագրերով աշխատելու հմտություններ:

**2. Խորհրդատուի ընդհանուր փորձառությունը (30 միավոր)**

- Համապատասխան ոլորտում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից 3-ը բուհական համակարգում դասավանդման և գիտամանկավարժական գործունեության փորձ:

**3. Խորհրդատուի հատուկ փորձառությունը (40 միավոր)**

- Ուսումնական ձեռնարկների/ուղեցույցների/ուսումնամեթոդական փաթեթների մշակման փորձ:
- Մասնակցությունը միջազգային ոլորտային, ոլորտային միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը կդիտվի որպես առավելություն:

Դիմող թեկնածուները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Անձը հաստատող փաստաթղթի պատճե
- Ինքնակենսագրություն /CV/
- Կրթությունը և որակավորումը հիմնավորող փաստաթղթերի պատճեններ

Հետաքրքրված Խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային Բանկի՝ Գնումների Կանոնակարգեր Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) վարկառուների համար թվագրված հունիս 2016, վերանայված նոյեմբեր 2017, օգոստոս 2018 և նոյեմբեր 2020 (այսուհետ կարգավորումներ) փաստաթղթի 3-րդ բաժնի 3.14, 3.16 և 3.17 պարագրաֆների վրա, որոնցով սահմանվում է Համաշխարհային Բանկի շահերի բախման վերաբերյալ քաղաքականությունը:

Խորհրդատուի ընտրությունը իրականացվելու է Գնումների Կանոնակարգերի՝ Անհատ Խորհրդատուի ընտրության մեթոդով /IC/:

Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ ստորև նշված հասցեով, աշխատանքային ժամերի ընթացքում՝ 10:00-17:00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր՝ ուղարկելով հետևյալ հասցեին (առձեռն, փոստով կամ էլ. փոստով) մինչև 2025թ. հունվարի 27-ը, տեղական ժամանակով՝ 17:00:

Դիմումի ձևը կցվում է ստորև:

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան»  
հիմնադրամ

Ռեկտորի ժ/պ՝ Մանուկ Բարսեղյան  
ՀՀ, ք.Երևան, 0009, Տերյան փ., 1052.  
Հեռ. (+37410) 303300-571  
E-mail: [angin84@mail.ru](mailto:angin84@mail.ru)  
Կայքի հասցե՝ <https://www.nuaca.am/>

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի  
ազգային համալսարան» հիմնադրամ  
ՀՀ, ք.Երևան, 0009, Տերյան փ., 105շ.

Դիմող՝ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ \_\_\_\_\_ / \_\_\_\_\_/

«\_\_\_\_» \_\_\_\_\_ 2025 թ.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

«Կրթության բարելավում» վարկային ծրագրի ՆՄՀ երկրորդ հիմնական շրջափուլով «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման խելացի լուծումների ապահովումը և կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացումը՝ լաբորատոր փորձասարքերի համալրմամբ» /ՄՄԱԲԹԼԱԲ/ դրամաշնորհային ծրագրի «Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկ»-ի մշակման նպատակով անհատ խորհրդատուի ընտրության

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՃՀԱՀ), «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացնում է «Ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման խելացի լուծումների ապահովումը և կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացումը՝ լաբորատոր փորձասարքերի համալրմամբ» /ՄՄԱԲԹԼԱԲ/ դրամաշնորհային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման համապատասխան կրթական ծրագրերի դասավանդման-ուսումնառության կատարելագործմանը, գիտահետազոտական գործունեության զարգացմանը և առևտրայինացմանը (կրթություն-գիտություն-բիզնես կապի ամրապնդում), կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներգրավմանը, խելացի լուծումների կիրառմանը և բուհի ուսումնագիտական գործառույթների ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը միտված առկա լաբորատոր բազայի համալրում միջառարկայական կիրառություն ունեցող նորագույն փորձասարքերով: Ծրագրի շրջանակներում ստեղծվելիք լաբորատորիաների աշխատանքների կազմակերպման, համապատասխան տեսական և գործնական հիմքերի ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև դրամաշնորհային ծրագրի շրջանակներում անհրաժեշտ մեթոդական ցուցումների մշակումը և տպագրությունը:

**2. ՆՊԱՏԱԿ**

«Ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման խելացի լուծումների ապահովումը և կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացումը՝ լաբորատոր փորձասարքերի համալրմամբ» /ՄՄԱԲԹԼԱԲ/ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել «Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման

ուսումնական ձեռնարկ»-ը (նվազագույնը՝ 60 էջ): Ուսումնակի ձեռնարկի մշակումը նախատեսվում է իրականացնել անհատ խորհրդատուի ներգրավման միջոցով: Անհատ խորհրդատուի աշխատանքի նպատակն է բուհի կողմից ձեռքբերված փորձասարքերի հնարավորությունների հիման վրա մշակել «Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկ»: Անհատ խորհրդատուի աշխատանքները կիրականացվեն 3 փուլով՝ 1-ին փուլ՝ 1 ամիս, 2-րդ փուլ՝ 1 ամիս, 3-րդ փուլ՝ 2 ամիս տևողությամբ:

### **3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ**

Խորհրդատուի աշխատանքների շրջանակը ներառում է (բայց չի սահմանափակում) հետևյալ հիմնական գործողությունները.

#### **1-ԻՆ ՓՈՒԼ**

- Իրականացնել շենքերի և շինությունների կառուցվածքների մշտադիտարկման միջազգային փորձի (նվազագույնը 2 երկրի) ուսումնասիրում, վերլուծություն և համադրում:
- Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա նախապատրաստել ուսումնական ձեռնարկի կառուցվածքը:
- Իրականացնել ուսումնական ձեռնարկի ներածության մշակում:
- «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի Ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր» ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, մշակված նյութերը և իրականացնել անհրաժեշտ քննարկումներ:
- Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից, մշակված նյութերի վերաբերյալ քննարկումների արդյունքում ներկայացված համապատասխան առաջարկությունների և դիտարկումների հիման վրա, ըստ անհրաժեշտության վերանայել դրանք:
- Փուլի ավարտին պատրաստել հաշվետվություն և ներկայացնել Ծրագրի ղեկավարին՝ ներառելով այս փուլում մշակված փաստաթղթերը:

#### **2-ԴՐ ՓՈՒԼ**

- Իրականացնել շենքերի և շինությունների կառուցվածքների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկի առաջին գլխի մշակում, որտեղ նաև կներառվի պատմական ակնարկ նախագծման գոյություն ունեցող մեթոդների մասին:
- Իրականացնել «Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկ»-ի 2-րդ գլխի մշակում, որտեղ մանրամասնորեն կներկայացվեն մշտադիտարկումների առանձին մեթոդներ իրենց կիրառման ձևերով:

- «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի Ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր» ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, մշակված նյութերը և իրականացնել անհրաժեշտ քննարկումներ:
- Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից, մշակված նյութերի վերաբերյալ քննարկումների արդյունքում ներկայացված համապատասխան առաջարկությունների և դիտարկումների հիման վրա, ըստ անհրաժեշտության վերանայել դրանք:

### **3-ԸՊ ՓՈՒԼ**

- Իրականացնել շենքերի և շինությունների կառուցվածքների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկի երրորդ գլխի մշակում, որտեղ կներառվի նաև օգտագործվող ժամանակակից նախագծման մեթոդները:
- «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի «Ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր» ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, մշակված նյութերը և իրականացնել անհրաժեշտ քննարկումներ:
- Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից, մշակված նյութերի վերաբերյալ քննարկումների արդյունքում ներկայացված համապատասխան առաջարկությունների և դիտարկումների հիման վրա, ըստ անհրաժեշտության վերանայել դրանք:
- Փուլի ավարտին պատրաստել հաշվետվություն և ներկայացնել Ծրագրի ղեկավարին՝ ներառելով այս փուլում մշակված փաստաթղթերը:

### **4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Անհատ խորհրդատուի աշխատանքները կիրականացվեն 3 փուլով՝ հետևյալ ժամանակացույցի համաձայն.

- առաջին փուլ՝ 1 ամիս
- երկրորդ փուլ՝ 1 ամիս
- երրորդ փուլ՝ 2 ամիս

### **5. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ**

Ծառայության մատուցման արդյունքում յուրաքանչյուր փուլի ավարտին անհատ խորհրդատուն Ծրագրի ղեկավարին պետք է ներկայացնի տվյալ փուլում մշակված հետևյալ փաստաթղթերը.

## 1-ԻՆ ՓՈՒԼ

- Շենքերի և շինությունների կառուցվածքների մշտադիտարկման միջազգային փորձի ուսումնասիրման վերաբերյալ հակիրճ հաշվետվություն՝ համապատասխան հղումներով:
- «Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկ»-ի կառուցվածքը:
- «Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկ»-ի ներածությունը:
- Փուլի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ ծավալված քննարկումների վերաբերյալ «Ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր» ամբիոնի նիստի քաղվածքը:
- Փուլի ավարտի ամփոփ հաշվետվությունը:

## 2-ԸՂ ՓՈՒԼ

- «Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկ»-ի մշակված առաջին գլուխը:
- «Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկ»-ի մշակված երկրորդ գլուխը:
- Փուլի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ ծավալված քննարկումների վերաբերյալ «Ճանապարհներ և կամուրջներ» ամբիոնի նիստի քաղվածքը:
- Փուլի ավարտի ամփոփ հաշվետվությունը:

## 3-ԸՂ ՓՈՒԼ

- «Շենքերի և շինությունների ինֆորմացիոն մոդելավորման (BIM) մեջ օբյեկտների մշտադիտարկման համակարգի նախագծման ուսումնական ձեռնարկ»-ի մշակված երրորդ գլուխը և ամբողջական ձեռնարկի վերջնական մշակված և խմբագրված տարբերակը:
- Փուլի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ ծավալված քննարկումների վերաբերյալ «Ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր» ամբիոնի նիստի քաղվածքը:
- Փուլի ավարտի ամփոփ հաշվետվությունը:

## 6. ԺԱՄԿԵՏՆԵՐ

Խորհրդատվական ծառայությունը կիրականացվի պայմանագրի կնքման օրվանից 4 ամիս տևողությամբ: